ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

7-րդ դասարան

Ուսումնական նյութեր աշակերտների համար

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021

Առաջադրանքներ

Թեմա 2. Ձևաբանություն (2 ժամ)

Դաս 1. Խոսքի մասերի տեսակները, դասակարգումը

1.Տարբերակի՛ր, մեկնաբանի՛ր։
ա. Կարդա՛ ներքոբերյալ տեքստը և աղյուսակի վանդակներում առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք ունեն ընդհանուր հատկանիշներ։
բ. Բացատրի՛ր *առարկա, հատկանիշ, թիվ, գործողություն* ցույց տվող բառերի իմաստային տարբերությունները։

Եվ այսպես, ես էլի մի կարևոր գյուտ արեցի։ Նրա հայրենի մոլորակն ընդամենը մի տան չափ է եղել…

Ասենք՝ դա ինձ այնքան էլ չզարմացրեց։ Ես գիտեի, որ մեր Երկրի, Յուպիտերի, Մարսի և Վեներայի նման մեծ մոլորակներից բացի հարյուրավոր այլ մոլորակներ գոյություն ունեն, դրանց թվում կան այնքան փոքրիկները, որոնց նույնիսկ աստղադիտակով դժվար է նկատելը։ Երբ աստղագետը նման մի մոլորակ է հայտնաբերում, նրան ոչ թե անուն է տալիս, այլ համար, օրինակ՝ № 251։

Ես լուրջ հիմքեր ունեմ կասկածելու, որ Փոքրիկ իշխանը եկել էր այն մոլորակից, որը կոչվում է մոլորակ № 612։ Այդ փոքրիկ մոլորակը միայն մի անգամ՝ 1909 թվականին, տեսել է մի թուրք աստղագետ։

Աստղագետն իր սքանչելի հայտնագործության մասին հայտնեց աստղագետների միջազգային կոնգրեսում, բայց նրան չհավատացին և միայն այն պատճառով, որ նա թուրքական տարազ ուներ հագին։ Դե ի՞նչ կարող ես անել, մեծահասակներն այդպես են։

№ 612 մոլորակի բախտից թուրքական սուլթանը մահվան սպառնալիքով իր հպատակներին հրամայեց եվրոպական հագուստ հագնել։ 1920 թվականին այդ աստղագետը նորից զեկուցեց իր հայտնագործության մասին։ Այս անգամ նա հագնվել էր՝ համապատասխան ամենավերջին նորաձևության, և բոլորը նրա հետ համաձայնեցին։

(Անտուան դը Սենտ Էքզյուպերի)

Հարցեր	*Առարկա*	*Հատկանիշ*	*Թիվ*	*Գործողություն*

2.Ամփոփի՛ր, հիմնավորի՛ր։
Մեկ նախադասությամբ ամփոփի՛ր տեքստի հիմնական միտքը. ուշադրությո՛ւն դարձրու, թե քո կազմած նախադասության մեջ իմաստային ընդհանուր հատկանիշ ունեցող որ բառերն են գերակշռում։ Ինչու՞. հիմնավորի՛ր խոսքդ։

3. Դասակարգի՛ր։
Տրված հրահանգները կատարելու համար ո՞ր խոսքի մասերը կկիրառես։ Պատասխանդ հիմնավորի՛ր օրինակներով։
ա. Անվանի՛ր բնության մեջ ապրող վայրի կենդանիներին----------:
բ. Բնութագրի՛ր քեզ ----------:
գ. Թվարկի՛ր պատմական իրադարձությունների տարեթվերը ----------:
դ. Կապի՛ր նախադասություններն իրար ----------:
ե.Կազմի՛ր քո առօրյան ներկայացնող գործողությունների հաջորդական ժամանակացույց-
----------:
զ. Դրսևորի՛ր վերաբերմունք ----------:
է.Արտահայտի՛ր զարմանք, որպիություն, ափսոսանք----------:

4. Կազմի՛ր։
Տրված բառերը ենթարկելով փոփոխության՝ կազմի՛ր համապատասխան խոսքի մասերը։ Ցո՛ւյց տուր, թե բառակազմության ժամանակ բառի շեշտը ինչպիսի փոփոխություն կրեց։ Հիմնավորի՛ր պատասխանդ։

Գոյական	Ածական	Բայ
		հմայել
	խոսուն	
գիր		
		շարել
	բարձր	

Դաս 2. Խոսքի մասերի ձևափոխությունները

1.Փոփոխի՛ր, եզրակացրո՛ւ։
ա.Կարդա՛ տեքստը, փակագծերում տրված բառերը ենթարկի՛ր փոփոխության այնպես, որ կապվեն տեքստի բովանդակության հետ։
բ.Մատնանշի՛ր, թե ինչ փոփոխություններ կրեցին բառերը։

Արմեն Շեկոյանը պատմեց ***(ինքը)*** ժամանակի մասին այնպես, որ այդ ***(ժամանակ)*** ինքն իրեն տեսավ, գտավ ու գոհ մնաց։ Հենց այդպես՝ գոհ մնաց, քանի որ Արմեն Շեկոյանը արեց ամենաարժեքավոր քայլը, ***(վերաիմաստավորել)*** լեզուն, ***(որ)*** պատմում ենք ժամանակի մասին, ազատականացրեց այն ու հերթական անգամ դարձրեց կենդանի։ Լեզվի հետ միասին ազատականացրեց մեզ բոլորիս, հատկապես ***(երևանցի)*** ու հատկապես թերթ կարդացող երևանցիներին։

Դա այն կենդանի ազատականացումն էր, որը միշտ սկիզբ է առնում մեծ գրողների շնորհիվ։ «Հիմա բոլորն ասում են՝ պահպանենք մեր լեզուն՝ (***չհասկանալ***), որ դա շատ վատ կարգախոս է։ Փոխանակ ասելու զարգացնենք մեր լեզուն, ասում ենք՝ պահպանենք։ Ախր միայն մեռած բանն է զմռսվում ու պահպանվում»,- ասել էր նա

հարցազրույցի ժամանակ։ Կարդում էր, տպում, խմբագրում, նորից կարդում։ «Բա կարծում ես՝ պարզ գրելը հե՞շտ է»,- զարմանում էր նա։

Հաճախ էր ասում՝ պետք է քվեարկել այն *(մարդ)* օգտին, ում սիրում ես։ Ձայն տալ այն *(գրող), (երգիչ),* քաղաքական *(գործիչ)*, *(որ)* սիրում ես։ Եվ առանց երկյուղի, թե կարող ես համարվել ոչ շատ հեռատես, նրբաճաշակ կամ խելացի։

Միշտ *(հորդորել)* լրագրողներին մասնակցել որևէ քաղաքական գործչի *(ասուլիս)* ու թերթում գրել լուր, որտեղ *(ասուլիս)* ասվածը կհանգավորվի ու (ստանալ) բանաստեղծության ֆորմա։ Ասում էր՝ գոնե էդպես ձանրձալի չի լինի։

(Հոդվածի աղբյուրը՝ media.am)

2.Քննարկի՛ր, գնահատի՛ր։

Զույգիդ հետ քննարկի՛ր տեքստի բովանդակությունը և ներկայացրո՛ւ քո կարծիքը Արմեն Շեկոյան գրողի մասին՝ ըստ այս տեքստի։
Ի՞նչ փաստեր կբերես տեքստից, որոնցով կհիմնավորես քո միտքը։

3.Ստեղծի՛ր։

Ներքոբերյալ բառաշարքն օգտագործելով՝ հորինի՛ր տեքստ։ Ուշադրությո՛ւն դարձրու, թե ինչպիսի փոփոխություններ կրեցին տրված բառերը։

Մեդիա, ինքնատիպ, տեղեկույթ, հոդված, գրել, լրագրող, վավերական, փաստ, կարծիք, լուր, փոխանցել, լրատվամիջոց, այդպիսի, պահպանել, մեկնաբանել։

Թեմա 3. Գոյական անուն (25 ժամ)
Դաս 1. Գոյականը՝ որպես խոսքի մաս

1.Դասակարգի՛ր։
Տրված աղյուսակում լրացրո՛ւ այունակները՝ համապատասխան ենթավերնագրի։

Անձ	իր	կենդանի	հասկացություն	բնության երևույթ	զգացմունք

2.Անվանի՛ր, սահմանի՛ր։
Վերոբերյալ աղյուսակում լրացրած գոյականները ի՞նչ հարցերի են պատասխանում։
Սահմանի՛ր գոյական խոսքի մասը։

Դաս 2. Գոյականի տեսակները՝ անձնանիշ և իրանիշ

1.Անվանի՛ր։
Անվանի՛ր պատկերված անձնանիշ առարկաները։ Ի՞նչ անձնանուններ կտաս նրանց։

2. Թվարկի՛ր։
Թվարկի՛ր 10 ամենապահանջված մասնագիտությունները. հիմնավորի՛ր քո տեսակետը։

1.----------
2.----------
3.----------
4.----------
5.----------
6.----------
7.----------
8.----------
9.----------
10.----------

3.Համեմատի՛ր և հակադրի՛ր։
Ո՞ր հատկանիշներով են իրար նման և իրարից տարբեր անձնանիշ և իրանիշ գոյականները։ Լրացրո՛ւ Т-աձև աղյուսակը։

Նմանություններ	Տարբերություններ

Դաս 3. Գոյականի տեսակները՝ հատուկ և հասարակ

1.Համեմատի՛ր, բացատրի՛ր։
Տրված տեքստից առանձնացրո՛ւ հասարակ և հատուկ անունները։ Ի՞նչ նկատեցիր նախադասություններում. բացատրի՛ր։
Մանուշակ մորաքույրը սիրում է ծաղիկներ աճեցնել, հոգ տանել նրանց մասին։ Եթե այցելեք նրան, ապա կնկատեք, որ լուսամուտագոգին դրված թաղարներում աճում են գողտրիկ մանուշակներ, նարգիզներ ու նունուֆարներ, որոնք վաղ արշալույսից մինչ երեկո անուշ բույր են սփռում շուրջբոլորը։ Նրա քույրը՝ Նունուֆարը, հաճախ է կատակում, որ ինքն էլ չգիտի՝ Մանուշակը ո՞ւմ, թե՞ ինչն է նախընտրում։ Արշալույս պապը և Շուշան տատը ամեն անգամ՝ այցի գալիս, իրենց այգուց զանազան ծաղիկների սերմեր են բերում Մանուշակին։ Այս անգամ բերել էին ծաղկած շուշանի տունկ։

2.Գնահատի՛ր։
Քննարկի՛ր զույգիդ հետ, թե ինչու է կարևոր հոգ տանել ծաղիկների մասին։ Ծաղիկները անձնանի՞շ, թե՞ իրանիշ գոյականներ են։

3.Վերապատմի՛ր։
ա.Նկարում պատկերված է Տաթևի վանական համալիրը։ Փնտրի՛ր համացանցում տեղեկույթ վանքի մասին։
բ.Պատկերացրո՛ւ, որ դու էքսկուրսավար ես և զբոսաշրջիկներին պատմում ես Տաթևի վանքի մասին։ 2-3 րոպեի ընթացքում բանավոր ներկայացրո՛ւ վանքի պատմությունը, կիրառի՛ր հատուկ անուններ։



Դաս 4-5. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը

1.Թվարկի՛ր:
ա. Գրի՛ր 5 քաղաքի կամ պետության անուն. ուշադրությո՛ւն դարձրու՝ դրանք պա՞րզ, թե՞ բաղադրյալ հատուկ անուններ են:
բ. Թվարկի՛ր և գրի՛ առ ներկայացրածդ քաղաքների պատմական հուշարձանները և հիշարժան վայրերը:
գ. Զույգիդ հետ քննարկի՛ր գրածդ և կատարի՛ր հատուկ անունների ուղղագրության փոխադարձ ստուգում:

2.Կազմի՛ր, ստուգի՛ր:
Գծի՛ր քո թաղամասի քարտեզը, անվանի՛ր գլխավոր փողոցներն ու շինությունները:
Ստուգի՛ր՝ արդյոք ճի՞շտ ես գրել բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը:

3.Նշի՛ր:
Կարդա՛ տեքստը, ընդգծի՛ր բաղադրյալ հատուկ անունները և և անհրաժեշտ տեղում գրի՛ր մեծատառով:
Հայտնի է , որ մեծ հայքի արտաշես ա բարի թագավորը՝արտաշեսյան թագավորության հիմնադիրը, իշխել է քրիստոսից առաջ 189 թվականից մինչև 160 թվականը՝ իր երկիրը ղեկավարելով հայոց թագադիր սմբատ բագրատունու օգնությամբ:

4.Ստեղծի՛ր, գնահատի՛ր:
ա.Նայի՛ր տրված նկարին և հորինի՛ր փոքրիկ պատմություն՝ կիրառելով հատուկ անուններ (50 բառ):
բ.Ո՞ր հատկանիշն ես գնահատում մարդ և կենդանի փոխհարաբերություններում. ինչու՞:

Դաս 7-8. Գոյականի թիվը՝ եզակի և հոգնակի

1.Կազմի՛ր:

Կազմի՛ր տրված գոյականների հոգնակի թիվը:

Անջրպետ---------- անգղ ----------

ցուցամատ ---------- նստացույց ----------

նավապետ ---------- նամականիշ----------

շոգեքարշ ---------- տոնացույց ----------

քարայծ ---------- ծոռ ----------

2.Օրինա՛կ բեր:

Ներքոբերյալ աղյուսակում հոգնակի թվով լրացրո՛ւ համապատասխան կանոնին պատկանող առնվազն 5 բառ:

Բարդ բառի վերջին միավանկ բաղադրիչը բայ է	Գրաբարյան միավանկ բառեր	Մեկուկեսվանկանի բառեր, որոնց գաղտնավանկը սկզբում է	Բարդ բառեր, որոնց վերջին բաղադրիչը կազմված է *պետ, նիշ, հարս, մատ, չափ* բառերից

3. Բացատրի՛ր:

Գծապատկերի կամ մտաքարտեզի միջոցով ներկայացրո՛ւ հոգնակի թվի կազմության կանոնները:

4.Ստեղծի՛ր, սահմանի՛ր:

ա.Տրված նկարի շուրջ հորինի՛ր փոքրիկ պատմություն՝ կիրառելով հոգնակի թվով դրված գոյականների առնվազն 5 կանոն:

բ.Սահմանի՛ր կիրառված կանոնները:

Դաս 9. Հավաքական, անեզական և անհոգնական գոյականներ

1.Լրացրո՛ւ, բացատրի՛ր։
Ներքոբերյալ հրավիրատոմսում լրացրո՛ւ հրավիրյալի և հրավիրողների ազգանունները։ Ի՞նչ թվով կգործածես. ինչո՞ւ։

Հրավիրատոմս

Հարգելի՛ ----------

Սիրով հրավիրում ենք Ձեզ մասնակցելու

ՄԱՆԵԻ ԵՎ ԱՐԱՄԻ

հարսանյաց արարողությանը, որը տեղի կունենա Սուրբ Սարգիս եկեղեցում սույն թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին։

Սիրով՝ ---------- և ----------

2. Թվարկի՛ր, կազմի՛ր։
Յուրաքանչյուր ամպիկի ներքևում թվարկի՛ր համապատասխան օրինակներ։ Ընտրի՛ր մեկական օրինակ և գործածի՛ր նախադասության մեջ։



3.Համեմատի՛ր, մեկնաբանի՛ր։
Տրված նախադասությունների հոգնակի թվով դրված գոյականները համեմատի՛ր իրար։ Բացատրի՛ր նրանց տարբերությունը։

1.Խրոնվում են մտքիս հանդեպ ***բանակները*** անհամար,
Տրրորում են քո երեսը, քո դաշտերը անհամար։
Հայոց ***բանակը*** ծանր և հերոսական մարտեր էր մղում Արցախյան պատերազմի ժամանակ։

2. Հրապարակում հավաքված **ամբոխը** զայրույթից մոլեգնել էր։

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կռվում էին **ամբոխները** խելագարված։

Դաս 10. Գոյականի որոշյալ և անորոշ առումները

1.Կիրառի՛ր։
Կարդա՛ տեքստը և փակագծում տրված գոյականները գործածի՛ր որոշյալ կամ անորոշ առումով։

Անտառի փեշին մոտիկ, գյուղից դուրս երեք **(տնակ)** կա։

Դրանցից մեկը, այն, որ անտառին ավելի մոտ է, Մանուշենց (**տուն**) է։ Մնացած երկուսում ապրում են **(Հասմիկ)** ու **(Տարոն)**։ Երեքի **(հայրիկներ)** էլ աշխատում են սղոցարանում։ Իսկ (**սղոցարան**) հեռու է, գրեթե անտառի մյուս երեսին, դրա համար էլ նրանք միայն կիրակի **(օր)** են տանը լինում։ Եթե սովորական օրերին էլ գալիս են (իսկ այդպես մեկ-մեկ է լինում), ապա այնքան ուշ են տուն հասնում, որ (**երեխաներ**) արդեն քնած են լինում։ **(Հայրիկներ)** առավոտ վաղ կանգնում են երեխաների անկողինների մոտ, նայում մուշ-մուշ քնած երեխաներին, (կարոտներ) առնում, բարձի տակ դնում բերած **(նվերներ)** ու գնում իրենց գործին։

(Ս.Հարությունյան)

2. Բացատրի՛ր։

Վերոբերյալ տեքստում բացատրի՛ր որոշյալ և անորոշ առումների իմաստային, ոճական տարբերությունները։

Դաս 11. Հոդեր

1.Լրացրո՛ւ։
Տրված աղյուսակում յուրաքանչյուր հոդի դիմաց գրի՛ր 5 օրինակ։

Հոդեր	Օրինակներ
դիմորոշ	
ստացական	
ցուցական	
որոշյալ	

2. Ստեղծի՛ր։
Կազմի՛ր ծանոթության կարճ երկխոսություն երկու տղաների միջև. նրանց խոսքում կիրառի՛ր բոլոր հոդերի տեսակներից։

3.Տարբերի՛ր։
Տրված չափածո հատվածներում առանձնացրո՛ւ հոդ ունեցող բառերը, որոշի՛ր հոդերի տեսակները։
ա.Մի՛ գլորիր ինձ, երբ ընկած եմ ես,
Եվ մի՛ կործանիր անօգ գայթածիս։
բ. Միայն սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում։
գ. Նստեցե՛ք, հով անեմ շոգին,
Մըրգերս քաղեցե՛ք մեկ-մեկ...
դ.Էա՛ց վերջին լացդ, սիրտ իմ մենավոր...
ե.Մենք բոլորս, որ հոգնաբեկ չենք նայում վեր-
Մոռանալով աշխարհային չարը, բարին...

Դաս 13. Գոյականի հոլովը. ուղղական հոլով

1.Թվարկի՛ր։
Թվարկի՛ր գոյականի հոլովները՝ ըստ ընդունված հաջորդականության.
---:

2. Առանձնացրո՛ւ, կանխատեսի՛ր, հորինի՛ր։
ա։ Կարդա՛ տեքստը, ընդգծի՛ր ուղղական հոլովով դրված բառերը։
բ. Պատմությունն անավարտ է. կանխատեսի՛ր, թե ինչ եղավ հետո։
գ. Հորինի՛ր ավարտ այս պատմության համար։

1976 թվականի սեպտեմբերի 16-ին Երևանյան լճի մոտով ընթացող տրոլեյբուսն ընկավ լիճը։ 92 մարդ հայտնվեց 10 մետր խորությամբ ջրի տակ։ Տրոլեյբուսի դռները փակ էին, և նրա մեջ գտնվող մարդկանց անխուսափելի մահ էր սպառնում, եթե չլիներ մեկը։ Եվ այդ մեկը Շավարշ Կարապետյանն էր՝ ստորջրյա լողի չեմպիոնը։ Նա այդ պահին լճի շուրջն իր մարզական վարժանքն էր անում։ Շավարշն անմիջապես սուզվեց ջրի մեջ, ոտքերով կոտրեց տրոլեյբուսի փակ ապակին և սկսեց հերթով ջրի տակից դուրս հանել ուշաթափված ուղևորներին։ Շուտով օգնության հասան նաև փրկարարները։ Քսանից ավելի մարդու կյանք փրկեց այդ օրը Շավարշը։ Սակայն ջրի մեջ երկար մնալուց նա հիվանդացավ թոքաբորբով։ Բժիշկները ---:

3. Հաղորդակցվի՛ր։
Այժմ համացանցում փնտրի՛ր տեղեկույթ Շավարշ Կարապետյանի մասին։ Տեղեկացի՛ր, թե ինչ եղավ իրականում։
Ճշմարտությունն իմանալուց հետո գնահատի՛ր նրա արարքը՝ քննարկելով դասընկերոջդ հետ, և քո պատասխանը գրի՛ր ներքևում։

---:

4. Ստուգի՛ր ինքդ քեզ։
Գրի՛ր այն ամենը, ինչ սովորեցիր գոյականի ուղղական հոլովի մասին։
1.----------
2.----------
3.----------
4.----------

Դաս 14. Գոյականի հոլովը. սեռական հոլով

1.Կազմի՛ր։
Կազմի՛ր տրված բառերի սեռական հոլովը։
Մարդ, երկինք, ընկեր, օր, կատու, տատի, գարուն, տուն, մերոնք, դար, արփի, եղբայր, դուռ, գիշեր, կին, պապ, անկյուն, բոպե, այգի, շարասյուն, շաբաթ։

2.Արտահայտի՛ր։
Նկարում պատկերվածը արտահայտի՛ր բառակապակցությամբ այնպես, որ առաջին բաղադրիչը միշտ դրված լինի սեռական հոլովով։

3.Տեղադրի՛ր, որոշի՛ր։
Փակագծերում տրված բառերը տեղադրի՛ր սեռական հոլովով և որոշի՛ր, թե ինչ վերջավորություն են ստացել։

(**Սեպտեմբեր**) վերջն էր. (**աշուն**) փոթորիկները մոլեգնում էին անասելի կատաղությամբ։ Ամբողջ օրը ոռնում էր քամին, և անձրևն այնպես էր թմբկահարում լուսամուտները, որ նույնիսկ այստեղ՝ հսկայական (**Լոնդոն**) հենց սրտում, մենք մի պահ կտրվում էինք (**կյանք**) սովորական ընթացքից և զգում կատաղած տարերքի ահեղ ուժերի ներկայությունը։ Իրիկնադեմին փոթորիկն ավելի անզուսպ դարձավ. քամին ծխնելույզների մեջ (**երեխա**) պես լալիս ու հեծկլտում էր։
Շերլոկ Հոլմսը մռայլ էր։ Նա տեղավորվել էր (**բուխարի**) մոտ և կարգի էր բերում (**հանցագործություններ**) իր քարտարկղը, իսկ ես, նստած նրա դիմաց, այնպես էի տարվել Կլարկ (**Ռասսել**) ծովային հրաշալի (**պատմվածքներ**) ընթերցանությամբ, որ (**փոթորիկ**) ոռնոցն իմ (**գիտակցություն**) մեջ միաձուլվում էր տեքստին, իսկ անձրևի աղմուկը թվում էր ծովի ալիքների շառաչ։
Հանկարծ լսվեց (**դուռ**) թակոց։ (**Ա. Կոնան Դոյլ**)

4. Ստուգի՛ր ինքդ քեզ։
Գրի՛ր այն ամենը, ինչ սովորեցիր գոյականի սեռական հոլովի մասին։

1.----------
2.----------
3.----------
4.----------
5.----------
6.----------

Դաս 15. Գոյականի հոլովը. տրական հոլով

1.Կազմի՛ր։
Կազմի՛ր տրված բառերի հոլովական ձևերը։
Քույր, առու, ձուկ, Վարդանանք, ամիս, հայր։

Ուղղ. ----------
սեռ. ----------
տր. ----------

2. Ճանաչի՛ր, բացատրի՛ր։
Տեքստում գտի՛ր տրական հոլովով դրված բառերը, որոշի՛ր՝ ինչ պաշտոն ունեն այդ բառերը։

— Լսե՛ք,- ասացի, նայելով Հոլմսին,- զանգը տալիս են։ Ո՞վ կարող է գալ այսօր. ձեր բարեկամներից որևէ մե՞կը։

— Ձեզանից բացի, ես ուրիշ բարեկամ չունեմ,-պատասխանեց Հոլմսը։ -Իսկ հյուրերի ես չեմ սպասում։

— Գուցե որևէ հաճախո՞ղդ է։

— Եթե այդպես է, ապա գործը պետք է որ շատ լուրջ լինի։ Ուրիշ ի՞նչը կստիպի մարդուն փոթորկոտ օրվա այս ժամին դուրս գալ փողոց։ Բայց գուցե մեր տանտիրուհուն են այցելել։

Սակայն Հոլմսը սխալվեց, որովհետև նախասենյակում լսվեցին ոտնաձայներ, ու մեր դուռը բախեցին։

(Ա. Կոնան Դոյլ)

3. Հաղորդակցվի՛ր։
Քննարկի՛ր այս հարցը դասընկերոջդ հետ. «Հայ ո՞ր գրողի կենսագրությունը կարող ես ներկայացնել»։
Ուղղորդող հարցեր։ Ե՞րբ է ծնվել, ինչպիսի՞ մանկություն է ունեցել, ի՞նչ ստեղծագործություններ է գրել, նրա ո՞ր գործն ես կարդացել, ինչու՞ ընտրեցիր այս գրողին։

4.Գնահատի՛ր, արժևորի՛ր։
Ուշադրություն դարձրի՞ր, թե խոսքդ կազմելիս բառերը ո՞ր հոլովներով գործածեցիր. ինչու՞ են կարևոր հոլովները մեր խոսքում։

Դաս 16. Գոյականի հոլովը. հայցական հոլով

1.Կազմի՛ր։
Կազմի՛ր տրված բառերի հոլովական ձևերը։

Մուկ, գինի, աներ, վայրկյան, կնքամայր, լուսաբաց։

Ուղղ. ----------

սեռ. ----------

տր. ----------

հայց.----------

2.Համեմատի՛ր, հակադրի՛ր։
Հայցական հոլովը համեմատի՛ր տրական և ուղղական հոլովների հետ։ Նմանություններն ու տարբերությունները լրացրո՛ւ Վենի դիագրամում։



3.Ձևաբանորեն վերլուծի՛ր։
Տեքստի ընդգծված գոյականները ենթարկի՛ր ձևաբանական վերլուծության՝ նշելով 5 քերականական հատկանիշ։

Մի օր որսի էի գնացել և երեկոյան դեմ հասա մի **անտառի**։ Այդ անտառում մի մեծ **լիճ** կար, որի մեջ անթիվ վայրի **բադեր** էին վխտում։ Այդքան շատ **բադեր** ես կյանքում չէի տեսել։

Բայց իմ բախտից մոտս ոչ մի գնդակ չէր մնացել։

Իսկ երեկոյան մեր տուն պիտի գային իմ բարեկամները, և ուզում էի նրանց որսի մսով հյուրասիրել։ Երկար մտածելուց հետո հակարծ հիշեցի, որ որսորդական պայուսակում մի կտոր խոզի ճարպ է մնացել։ Ուռա՛... **Ճարպի** կտորը պայուսակից հանելով՝ արագ կապեցի մի բարակ ու երկար պարանի և **ջուրը** գցեցի։

Բադերը, **ուտելիքը** տեսնելով, իսկույն դեպի **ճարպը** լողացին։

(Էրիխ Ռասպե)

4. Ստուգի՛ր ինքդ քեզ։
Գրի՛ր այն ամենը, ինչ սովորեցիր գոյականի հայցական հոլովի մասին։

1.----------
2.----------
3.----------
4.----------
5.----------
6.----------

Դաս 17. Գոյականի հոլովը. բացառական հոլով

1.Կազմի՛ր։
Կազմի՛ր տրված բառերի հոլովական ձևերը։
նավաստի, առագաստ, նավախել, բեռ, մակույկ, անձնակազմ։

Ուղղ. ----------
սեռ. ----------
տր. ----------
հայց.----------
բաց.----------

2.Կիրառի՛ր։
Վերոբերյալ վարժությունից ընտրի՛ր 4 բառ և կազմի՛ր նախադասություններ՝ այդ գոյականները գործածելով բացառական հոլովով։

3. Հաղորդակցվի՛ր։
Ներքևում տրված հարցի պատասխանը գրելուց հետո դասընկերոջդ հետ քննարկի՛ր 2-րդ հարցը։
1.Քո իմացած ո՞ր լեզուներն ունեն հոլովներ։

2.Ինչպիսի՞ նմանություն կամ տարբերություն ես տեսնում հայերենի հոլովների և քո իմացած լեզվի հոլովների միջև։ Նշի՛ր 2 հատկանիշ հիմնավորումով։

Դաս 18. Գոյականի հոլովը. գործիական հոլով

1.Կազմի՛ր։
Կազմի՛ր տրված բառերի հոլովական ձևերը։
հիշողություն, մտրակ, շարժում, դուռ, զմրուխտ, մատանի։

Ուղղ. ----------
սեռ. ----------
տր. ----------
հայց.----------
բաց.----------
գործ.----------

2. Տեղադրի՛ր, որոշի՛ր։
Փակագծերում տրված բառերը տեղադրի՛ր համապատասխան հոլովով և որոշի՛ր, թե որ հոլովով գործածեցիր։

Այո՛, հնարամտությունը կյանքում ամենից գլխավոր բանն է, և աշխարհում բարոն **(Մյունհաուզեն)** ավելի հնարամիտ մարդ չի եղել։

Մի անգամ ռուսական անտառում մի սև (**աղվես**) պատահեցի։ Այդ (**աղվես**) մորթին այնքան լավն էր, որ **(գնդակ)** կամ **(կոտորակ)** փչացնելն ափսոս էր։ Ոչ մի րոպե չկորցնելով՝ գնդակը հրացանի **(փող)** հանեցի, հրացանը **(կոշկակար)** երկար **(ասեղ)** լցրի և արձակեցի։ Ու քանի որ աղվեսը կանգնած էր ծառի մոտ, այդ պատճառով **(ասեղ)** նրա պոչն ամուր մեխեց ծառի **(բուն)։** Ես առանց շտապելու մոտեցա **(աղվես)** և սկսեցի մտրակել։ Նա, (**ցավ**) նեղվելով, հավատո՞ւմ եք, դուրս թռավ իր ***(մորթի)*** և տկլոր փախավ։

Իսկ մորթին, որ վերցրի, անվնաս էր. **(գնդակ)** կամ **(կոտորակ**) ծակված չէր, փչացած չէր։

(Էրիխ Ռասպե)

4.Հաղորդակցվի՛ր։
Գերմանացի գրող Էրիխ Ռասպեի «Բարոն Մյունխհաուզենի արկածները» պատմվածքի գլխավոր հերոսը կարծում է, որ «հնարամտությունը կյանքում ամենից գլխավոր բանն է»։ Իսկ ի՞նչ ես կարծում դու. մտորի՛ր, իսկ հետո մտքեր փոխանակի՛ր դասընկերոջդ հետ։

Դաս 19. Գոյականի հոլովը. ներգոյական հոլով

1. Ստուգի՛ր ինքդ քեզ։
Գրի՛ր այն ամենը, ինչ սովորեցիր գոյականի ներգոյական հոլովի մասին։

1.----------

2.----------

3.----------

4.----------

5.----------

6.----------

2.Կազմի՛ր։
ա.Կազմի՛ր տրված բառերի հոլովական ձևերը։

Փողոց, աղջիկ, ժամանակ, հրապարակ, գայլ, անկողին, երդում։

ուղղ. ----------

սեռ. ----------

տր. ----------

հայց.----------

բաց.----------

գործ.----------

ներգ.----------

բ. Վերոբերյալ շարքում ո՞ր գոյականներն էին, որ չունեին ներգոյական հոլով: Ինչու՞. բացատրի՛ր:

3.Ձևաբանորեն վերլուծի՛ր:
Տեքստի ընդգծված գոյականները ենթարկի՛ր ձևաբանական վերլուծության՝ նշելով 5 քերականական հատկանիշ:

<u>Արշալույսից</u> առաջ մենք դարան էինք մտած Եղնուտի <u>կիրճում</u>: Ես իմ դիրքից պահում էի առաջիս ընկած բացատը: Դիմացս կանգնած էր խոր ու անթափանցելի մութ անտառը:

Ես առաջին անգամն էի տեսնում եղջերուին ազատ բնության մեջ: Նա դուրս եկավ մի խաղաղ <u>հպարտությամբ</u>, վեհ ու չքնաղ, ինչպես բնության էն ամեն գեղեցկությունների <u>տերն</u> ու թագավորը: Կիսովին, դեռ <u>անտառի</u> մթության մեջ կանգնեց, թուխ <u>դունչը</u> դրավ գետնին, ապա թե գլուխը բարձրացրեց, վայրենի <u>շնորհքով</u> ոլորեց երկայն վիզը ու նայեց իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ <u>կյանքում:</u>

Ես շփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել հրացանս. . .

(Հովհ. Թումանյան)

4. Կանխատեսի՛ր, հաղորդակցվի՛ր:
Ի՞նչ ես կարծում, ի՞նչ եղավ պատմվածքի վերջում: Քո կանխատեսումը ներկայացրո՛ւ դասընկերոջդ, լսի՛ր նրա կարծիքը, իսկ հետո համացանցում միասին գտե՛ք պատմվածքը և կարդացե՛ք:

Դաս 20-21. Հոլովում, արտաքին և ներքին հոլովում

1.Ճանաչի՛ր, տարբերակի՛ր:
Կարդա՛ տեքստը և ներքոբերյալ աղյուսակում դո՛ւրս գրիր արտաքին հոլովման պատկանող գոյականները:

Ծիծեռնակը բույն էր շինել մեր սրահի օճորքում: Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալի, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի օճորքին:

Ե՛վ գարունն էր բացվում, և՛ մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարթ ճիչով հայտնվում էր մեր գյուղում ու մեր կտուրի տակ:

Եվ ի՜նչ քաղցր էր, երբ առավոտները նա ծլվլում էր մեր երդիկին կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ շարժվում էին մի երկար ձողի վրա ու «կարդում իրիկնաժամը»:

Եվ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բունը: Ձու էր ածել, ճուտ էր հանել ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին:

(Հովհ. Թումանյան)

Արտաքին հոլովում	
ի	
վա	
ան	
ոջ	
ու	
ց	

2. Լրացրո՛ւ։
Լրացրո՛ւ օրինակներով նախորդ վարժության այն այունակները, որոնք մնացին դատարկ (5-ական օրինակ)։

3.Մեկնաբանի՛ր։
Ինչու՞ է կոչվում ներքին հոլովում։ Բե՛ր օրինակներ։

4. Ստուգի՛ր ինքդ քեզ։
Գրի՛ր այն ամենը, ինչ սովորեցիր գոյականի արտաքին և ներքին հոլովման մասին։
1.----------
2.----------
3.----------
4.----------
5.----------
6.----------

4. Հաղորդակցվի՛ր։
Ո՞րն է քո սիրելի մուլտֆիլմը։ Դասընկերոջդ պատմի՛ր այդ մուլտֆիլմի մասին՝ հիմնավորելով, թե ինչու ես այն սիրում։
Ուշադի՛ր եղիր, որ խոսքդ կառուցես գրագետ և համակարգված։

Դաս 22. Հոլովում, այլաձև և զուգաձև հոլովում

1.Ճանաչի՛ր, դասակարգի՛ր։
Տրված շարքի գոյականներից յուրաքանչյուրը ի՞նչ հոլովման է պատկանում։

Հույս, կայսր, Գյումրի, ծնունդ, աղջիկ, սեր, մահ, ամիս, շարժում, ժամ, ամառ։

Այլաձև հոլովում	Զուգաձև հոլովում

2.Կիրառի՛ր։
Վերոբերյալ վարժության բառերից մի քանիսը կիրառի՛ր նախադասության մեջ։

3.Բացատրի՛ր, քննի՛ր։
Բացատրի՛ր, թե ինչ տարբերություն կա այլաձև և զուգաձև հոլովումների միջև։
Հիմնավորման ժամանակ ուշադրությո՛ւն դարձրու «այլաձև», «զուգաձև» եզրույթների բառակազմությանը։ Ի՞նչ է հուշում այն։

Դաս 23-24. Թեմայի ամփոփում և կրկնություն

1.Ստուգի՛ր քո ընկալումը։
ա.Գրավոր ներկայացրո՛ւ այն ամենը, ինչ սովորեցիր «Գոյական անուն» թեմայի շուրջ։ Յուրաքանչյուր համարակալում նոր միտք է։ Եթե գիտես ավելին, ապա համարակալումը շարունակի՛ր։

1.----------

2.----------

3.----------

4. ----------

5. ----------

6.----------

7.----------

բ.Հասկացա։ Այժմ ես գիտեմ, որ առանց գոյականի հոլովների ----------
---

գ.Ես կարիք ունեմ օգնության հոլովների թեմայի շուրջ, քանի որ ----------
---

3.Գնահատի՛ր, արժևորի՛ր։
Ներքևում թվարկած կարողունակություններից որո՞նք զարգացան քեզ մոտ այս թեմայի ուսումնասիրության ժամանակ։ Նշի՛ր բոլոր նրանք, որոնց համար կարող ես բերել հիմնավորումներ։

ապրումակցում
ստեղծագործականություն
հաղորդակցական հմտություն
համագործակցություն
ունկնդրելու և դիտարկելու հմտություն

Թեմա 4. Ածական անուն (6 ժամ)
Դաս 1.Ածականը՝ որպես խոսքի մաս

1.Դասակարգի՛ր։
Կարդա՛ տեքստը և ներքոբերյալ աղյուսակում համապատասխանաբար դո՛ւրս գրիր այն ածականները, որոնք նկարագրում են կերպարի *արտաքինը, ներաշխարհը, խոսքը։*
Մի քանի նախադասությամբ ներկայացրո՛ւ քո կարծիքը կերպարի մասին։ Տեքստի ո՞ր հատվածները կօգնեն քեզ հիմնավորելու խոսքդ։

Ես տասներեք տարեկան հասակումս մի սրամիտ ու կատակասեր տղա էի, մինչև անգամ աչքի ընկնող սրամիտ. գոնե ես այդ կարծիքը ունեի իմ մասին։ Բաց կապտավուն աչքերիս մեջ մշտապես խաղում էր չարաճճի ժպիտը, սև գանգուր մազերս անփույթ թափվում էին ճակատիս, իսկ երկար ձեռքերս թաքցնում էի տաբատի գրպաններում։ Համարձակ և ինքնավստահ քայլվածք ունեի և, որտեղ էլ որ լինեի, իմ անկաշկանդ ու ազատ խոսքով, սուր կատակներով միշտ ինձ վրա էի հրավիրում բոլորի ուշադրությունը։

Իմ պատանեկության այդ վաղ ժամանակում ես սիրտ արի առաջին տպագրության տալ իմ գրվածքը, որ բոլորովին անսպասելի կերպով մեծ աղմուկ գցեց մեր հասարակության շրջանում։ Իմ հոդվածիկով, կարելի է ասել, պարծենում էր մեր հասարակությունը, ինչպես և ես ինքս։

Ես, ինչպես ասում են, լրագրի «չարաճճին» դարձա, մի քաջարի ու փառասեր չարաճճի։

(Մարկ Տվեն)

Ածական անուն		
Արտաքին	Ներաշխարհ	Խոսք

2.Կանխատեսի՛ր։
Ուշադիր նայի՛ր նկարին և ներկայացրո՛ւ այս պատանուն՝ բնութագրելով նրա արտաքինը, ներաշխարհը։ Բնութագրող բառերը գրի՛ր ներքոբերյալ սյունակներում։

Արտաքին	Ներաշխարհ

Ի՞նչ ես կարծում, ինչպիսի՞ խոսք ունի այս պարմանին։ Ինչու՞ ես այդպես կարծում, որո՞նք են քո հիմնավորումները։

3. «Ֆեյսբուք»
սոցիալական հարթակում մի խումբ օգտատերեր ֆլեշմոբ են մեկնարկել՝ ի պաշտպանություն տպագիր գրքի. յուրաքանչյուր օգտատեր գրում է իր սիրելի գրքի անունը և բնութագրում այն 5 ածականով։ Այժմ հերթը քոնն է գրելու։

4.Հաղորդակցվի՛ր։
Զույգիդ ներկայացրո՛ւ քո սիրելի գրքից մեկ հատված 4-5 նախադասությամբ և հիմնավորի՛ր, թե ինչու հենց այդ հատվածն ընտրեցիր։

Իսկ դու գիտե՞ս

Ֆլեշմոբի հայտնվելը փաստագրված է 1986 թվականին նկարահանված «Մալիավկինն ու ընկերները» խորհրդային ֆիլմում։ Ֆիլմի առաջին տեսարանում ուշադրություն գրավելու համար դպրոցականների մի խումբ պարային համար է ցուցադրում։
Ֆլեշմոբը հայտնվեց այն բանից հետո, երբ 2002 թվականի հոկտեմբերին դուրս եկավ մի գիրք, որի հեղինակն էր Գովարդա Ռեյնգոլդը։ Հեղինակն ասում էր, որ մարդիկ պետք է օգտագործեն նոր հաղորդակցական տեխնոլոգիաներ (համացանց, բջջային հեռախոսներ)։
Առաջին ֆլեշմոբը նշանակված է եղել 2003 թվականի հունիսի 3-ին Նյու Յորք քաղաքում, սակայն տեղի չունեցավ, քանի որ ոստիկանները կանխեցին։ Կազմակերպիչները խուսափեցին այդ խնդրից երկրորդ ֆլեշմոբի իրականացումից հետո, որը տեղի ունեցավ 2003 թվականի հունիսի 17-ին։ Մասնակիցները եկան նախատեսված վայրը, որտեղ էլ ստացան հրահանգները։
(Նյութի աղբյուրը՝ Վիքիպեդիա)

4.Համեմատի՛ր և հակադրի՛ր։ Կարդա՛ տեքստը և փակագծերում տրված ածականները ավելացրո՛ւ կետագծերի տեղերում։
Աշխատանքն ավարտելուց հետո համեմատի՛ր և հակադրի՛ր այդ երկու տեքստերը (նախնական տարբերակը և վերջնականը)։ Ներքոբերյալ T-աձև աղյուսակում ներկայացրո՛ւ նմանությունները և տարբերությունները։

Նրանց առջև՝ հատակին, ---------- գորգեր էին փռված։ Հենց սկզբից նրանց դուր եկան երկու ---------- գորգերը, բայց մյուսներն էլ՝ ----------, պակաս չէին հրապուրում։ Դժվար էր դիմանալ գայթակղությանը։ Սակայն ---------- գինը վախեցրեց նրանց։ Բաժնի վարիչը մեծ պատիվ արեց. ինքը զբաղվեց նրանցով։ Ի դեպ, աղջիկը շատ լավ գիտեր, որ նա այդ բանն անում է ոչ թե իր համար, այլ Ջոյի։ Իզուր չէ, որ վերևի հարկը բարձրանալիս --------- տղան, բերանը բաց, իր հիացած հայացքը Ջոյից չէր կտրում։ Այդպիսի ակնածանքով էին նայում նրան թե՛ մեծերը, թե՛ փոքրերը, երբ պատահում էր, որ աղջիկը Ջոյի հետ միասին անցնում էր քաղաքի ---------- մասում ընկած իրենց թաղամասով։
Բաժնի վարիչին կանչեցին հեռախոսի մոտ, ու անմիջապես էլ -------- գորգ գնելու ցանկության և շատ փող ծախսելու վախի միջև եղած պայքարը աղջկա հոգում տեղի տվեց ուրիշ, ավելի ---------- մտքերի։
— Չեմ հասկանում, Ջո՛, թե դրա մեջ ի՞նչ լավ բան ես գտել,-ասաց նա մեղմ, բայց պահանջկոտ ձայնով՝ ըստ երևույթին շարունակելով քիչ առաջ սկսած և ոչ մի արդյունքի չհասցրած վեճը։
Տղայի ---------- դեմքը մռայլվեց, բայց մի ակնթարթ միայն, և անմիջապես էլ նորից փայլեց քնքշությամբ։ Նա շատ ջահել էր, համարյա երեխա, իսկ Ջեննան՝ գրեթե աղջնակ. կյանքի շեմին կանգնած երկու ---------- էակներ էին նրանք, որ գորգ էին ընտրում իրենց ---------- բույնը զարդարելու համար։

— Արժե՞ դրա համար հուզվել,-հարցրեց տղան։- Ես քեզ ասացի չէ՞, որ սա վերջին անգամն է, ամենավերջին անգամը։

(Ջեկ Լոնդոն)

(տագնապալից, փոքրիկ, շքեղ ու վառվռուն, բարձր, պատանի, շքեղ, վերելակապան, կիսամանկական, գույնզգույն ու նախշավոր, արևմտյան, բրյուսելյան)

Համեմատի՛ր	Հակադրի՛ր
Նմանություններ	Տարբերություններ

Դաս 2-3. Ածականի տեսակները: Համեմատության աստիճանները
Դաս 4.Հարաբերական ածականներ

1. Մեկնաբանի՛ր: Ըստ տեսակների՝ դասակարգի՛ր վերոբերյալ վարժության ածական-ները՝ որակական և հարաբերական։ Մեկնաբանի՛ր նրանց միջև եղած իմաստային տարբերությունները։

2.Կազմի՛ր:
Տրված շարքից ընտրի՛ր այն ածականները, որոնք ունեն համեմատության աստիճան։ Կազմի՛ր այդ ածականների համեմատության աստիճանները՝ լրացնելով աղյուսակում։ Հիմնավորի՛ր, թե ինչու մյուս ածականները չունեն համեմատության աստիճաններ։

Բոկոտն, խոհուն, դաշտային, հմայիչ, ամայի, կարմիր, մանր, նախշազարդ, հղի, ողորկ, զազրելի, ամառային, բարձր, սաղարթախիտ, խենթ։

Որակական ածական	
դրական աստիճան	
բաղդատական աստիճան	
գերադրական աստիճան	

3.Լրացրո՛ւ:
Բաց թողած վանդակներում լրացրո՛ւ համապատասխան խոսքի մասը:

Ածական	Գոյական
հմայագեղ	
	տեղեկույթ
	հայրենիք
երևանյան	
	արտահայտություն
	նինջ

Դաս 5. Ածականի կիրառությունը

1.Ստեղծի՛ր:
Պատկերացրո՛ւ, որ դու պատանի լրագրող ես և մանկապատանեկան թերթի համար պետք է գրես փոքրիկ հոդված քո սիրելի հերոսի մասին, որը կարող է լինել ֆուտբոլիստ, երաժիշտ, նկարիչ և այլն: Գրի՛ր այդ հոդվածը՝ կիրառելով պատկերավոր խոսք:

Հուշում: Հոդվածը գրելուց առաջ փնտրի՛ր տեղեկույթ համացանցում: Կարևոր է, որ քո հոդվածում լինեն ստույգ և հիմնավոր փաստեր, ուստի տեղեկույթ փնտրելիս առաջնորդվի՛ր այս փոքրիկ ուղեցույցով.

- Ստուգե՛ք կայքի հասցեն. կեղծ կայքերը հաճախ նմանակում են հայտնի կայքերի հղումներին՝ դրանց ավելացնելով որևէ վերջավորություն, օրինակ՝ «.co»:
- Եթե կայքն անծանոթ է, փորձե՛ք գտնել եւ ստուգել «Մեր մասին» բաժինը, ապա կայքի անվամբ Գուգլի որոնո՛ւմ արեք՝ ավելացնելով «կեղծ» բառը:
- Եթե նյութում կան այլ հղումներ, դրանք էլ ստուգե՛ք: Եթե չկա որևէ հղում, դա էլ մտածելու առիթ է:
- Ստուգե՛ք կասկածելի լուրը՝ հեղինակավոր լրատվամիջոցի՝ նույն թեմայով հրապարակումների հետ համեմատելով:

(Ուղեցույցի աղբյուրը՝ media.am)

Թեմա 5. Թվական անուն (9 ժամ)
Դաս 1. Թվականը՝ որպես խոսքի մաս: Թվականի տեսակները

1.Ինքնուրույն մտածի՛ր, զույգիդ հետ քննարկի՛ր:
Պատասխանի՛ր տրված հարցերին:

- Ի՞նչ կլիներ, եթե չլինեին թվերը:
- Ի՞նչ գիտես թվերի ծագման մասին:
- Ո՞ր առարկայի հիմնական հասկացություններից են թվերը:
- Քեզ ծանոթ առարկաներում *(պատմություն, բնագիտություն, գրականություն, մաթեմատիկա*) ի՞նչ դեր են խաղում թվերը:

2. Սահմանի՛ր:
Ինչպե՞ս կսահմանես ներքոբերյալ հասկացությունները:
Թիվ----------
Թվային կարգ----------
Քանակ----------
Թվանշան----------

3.Վերարտադրի՛ր, մտահանգու՛մ արա:
ա.Կարդա՛ այս տեղեկությունը և 1-2 նախադասությամբ վերարտադի՛ր այն:
բ. Ի՞նչ նոր բան իմացար այս տեղեկությունից: Կարդացածիդ վերաբերյալ մտահանգո՛ւմ արա:

Հայաստան. վաղ միջնադար. 5-ից 7-րդ դարեր: Մշակույթն ու գիտությունը Հայաստանում այնպիսի բարձունքների են հասնում, որ ապահովում են նրա տեղը աշխարհի ամենաքաղաքակիրթ պետությունների շարքում:

Մեսրոպ Մաշտոցը 451թ. ստեղծում է հայերենի այբուբենը, Մովսես Խորենացին 5-րդ դարում գրում է «Հայոց պատմություն» աշխատությունը, Եզնիկ Կողբացին և Դավիթ Անհաղթը գրում են փիլիսոփայական աշխատությունները:

Աննախադեպ վերելք են ապրում նաև բնական գիտությունները, մասնավորապես մաթեմատիկան: 7-րդ դարի մեծանուն գիտնական Անանիա Շիրակացու բազմաթիվ աշխատություններից արժեքավոր է հատկապես թվաբանության դասագիրքը: Դասագիրքը պարունակում է թվաբանական գործողությունների աղյուսակներ, ինչպես օրինակ՝ ***ա ա բ 1+1=2:***

4.Տարբերակի՛ր:
Նախորդ առաջադրանքից դո՛ւրս գրիր թվականները և լրացրո՛ւ համապատասխան սյունակում:

Քանակական թվականներ	Դասական թվականներ

Դաս 2. Քանակական թվականների կազմությունը և ուղղագրությունը

1.Ճանաչի՛ր, դասակարգի՛ր։
ա.Տրված նախադասություններից դու՛ս գրիր թվականները, որոշի՛ր տեսակը, կազմությունը։
բ.Թվականները գրի՛ր տառերով։
Կռունկները 5-5, 7-7, 9-9 շարվում են իրար հետևից և բարձրանում են վեր արագ սլացքով։ Ֆրանսիացի փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզիկոս Ռենե Դեկարտը ապրել է 1596-ից մինչև 1650թ.։ 220 թվի բաժանարարներն են 1, 2, 4, 5, 10, 20, 11, 22, 44, 55, 110 թվերը։ Ձուկը կշռում է 8կգ և էլի կեսի կեսի կես ձուկ. որքա՞ն է կշռում ձուկը։ Քաղաքի բնակչության 1/3 մասը օտարազգիներ են։

2.Լրացրո՛ւ։
Կարդա՛ տեքստը և կոտորակային թվականները գրի՛ր տառերով։

Կոտորակները հնարավորություն են տալիս գրելու ոչ ամբողջ թվերը։ Կոտորակներով կարելի է լրացնել ամբողջ թվերի միջև եղած միջակայքերը, իսկ դա օգնում է ավելի ճշգրիտ չափումներ կատարելու։ Կա կոտորակային թվերը գրելու երկու եղանակ՝ այսպես կոչված սովորական կոտորակներ, որը 2 ամբողջ թվերի հարաբերություն է, օրինակ՝ ¾----------, և տասնորդական կոտորակներ, օրինակ՝ 0,75----------:
Սովորական կոտորակի վերևի թիվն անվանում են համարիչ, ներքևինը՝ հայտարար։
Իսկ տասնորդական կոտորակը, օրինակ՝ 16,25, գրվում է առանց հայտարարի և կարդացվում ----------:

3.Գծի՛ր, բացատրի՛ր։
Գծի՛ր քանակական թվականների գծապատկերը և ներկայացրո՛ւ, թե նրա յուրաքանչյուր տեսակը ինչպես է կազմվում։ Բե՛ր օրինակներ։

Դաս 3. Թվականի՝ գոյականի հետ համաձայնության և անհամաձայնության դեպքերը

1.Դիտարկի՛ր, մեկնաբանի՛ր։
Թվականի՝ գոյականի հետ գործածության ի՞նչ կանոններ կարող ես դուրս բերել այս օրինակներից։
ա.Գազարով կարկանդակ պատրաստելու համար անհրաժեշտ են մի շարք բաղադրիչներ՝ 2 հատ գազար, 100գ չամիչ, 100գ ընկույզ, 120գ մեղր, 1 բաժակ բուսայուղ, 0,5 թ/գ սոդա և 2 բաժակ ալյուր։
բ.Երկու մանկամարդ աղջիկներ էին, որ գալիս էին դեպի ապարանքը(Դ.Դ.)։ Թաղամասից, որ երկու-երեք օր առաջ ուղիղ հարյուր երեք հասցեատեր ուներ, հինգ-վեց հարյուր պատուհան և մի քանի չասֆալտած փողոց, այդ պահին մնացել էր միայն մի պատ(Վիր.Փ.)։

2.Տեղադրի՛ր, բացատրի՛ր։
ա.Փակագծերում տրված բառերը, գործածելով եզակի կամ հոգնակի թվով, տեղադրի՛ր կետերի փոխարեն և բացատրի՛ր։
բ.Թվականները գրի՛ր տառերով։
Էրմիտաժը աշխարհի հայտնի պատկերասրահներից մեկն է։ Այն 1852 թ-ից բացվել է հասարակական այցելությունների համար։ Այնտեղ արվեստի ավելի քան երեք միլիոն----------(ստեղծագործություն) է ցուցադրվում, որոնց թվում կան 15000 ----------(նկար), 600000 ----------(փորագրություն) ու ----------(գծանկար), 12000----------(քանդակ), մեկ միլիոնից ավելի ----------(դրամ) ու ----------(մեդալիոն), կիրառական արվեստի 220000 ----------(գործ)։

3.Ստեղծի՛ր։
Նայի՛ր այս նկարին և հորինի՛ր փոքրիկ պատմություն՝ ստեղծելով ուրախ և զվարթ մթնոլորտ։
Պատմության մեջ կիրառի՛ր թվականներ և ածականներ։ Քո պատմության մեջ թվականի հետ գործածի՛ր գոյականներ, որոնք դրված կլինեն եզակի կամ հոգնակի թվով։

Դաս 4. Դասական թվականների կազմությունը և ուղղագրությունը

1.Տարբերակի՛ր, բացատրի՛ր։
ա.Կարդա՛ տեքստը և առանձնացրո՛ւ դասական թվականները։ Բացատրի՛ր դասական թվականների կազմության ձևերը։
բ.Անվանի՛ր տեքստում գործածված մյուս թվականների տեսակները։

Մենք ապրում ենք 21-րդ դարում, այսինքն՝ 2000-ականներում։ Նույն կերպ, երբ ասում ենք «20-րդ դար», նկատի ունենք 1900-ականները։ Այս ամենի պատճառն այն է, որ մեր օգտագործած օրացույցում 1-ին դարն իր մեջ ներառում է 1-ից 100 տարիները (0 տարի գոյություն չունի), իսկ 2-րդ դարը՝ 101-ից 200։ Ճիշտ այդպես, երբ ասում ենք մ.թ.ա. 2-րդ դար, նկատի ունենք մ.թ.ա. 200-ից 101թթ.։

2.Թվարկի՛ր, բացատրի՛ր։
Դասական թվականների գրության ինչպիսի՞ ձևեր գիտես. գրի՛ր աղյուսակում։

Գրության ձևը	Բացատրությունը

Իսկ դու գիտե՞ս

Շատ հաճախ թվականների հետ օգտագործում են ***Ք.ա***. և ***Ք.հ.*** համառոտագրությունները: ***Ք.ա***. նշանակում է Քրիստոսից առաջ և ***Ք.հ.***՝ Քրիստոսից հետո: Պատճառն այն է, որ մեր թվարկության սկիզբը համարվում է Քրիստոսի ծնունդը՝ 1 թվականը:

Ավելի ժամանակակից համակարգում օգտագործվում է ***մ.թ.ա***. (մեր թվարկությունից առաջ) կամ ***մ.թ***. համառոտագրությունը (մեր թվարկություն):

Դաս 5. Թվարկման գրավոր արտահայտության ձևերը

1. Գրի՛ր, կիրառի՛ր:

ա.Դասական թվականները գրի՛ր հայերեն այբուբենի տառերով, հռոմեական թվանշաններով և բառերով:

1-ին, 10-րդ, 18-րդ, 90-րդ,100-րդ, 2021-րդ:

բ.Քո ընտանիքի անդամների ծննդյան թվերը արտահայտի՛ր հայերեն այբուբենի տառերով:

2. **Գրի՛ր, կիրառի՛ր:**

Արաբական թվանշաններով գրի՛ր 5 գրողի ապրած դարաշրջան: Այդ թվանշաններից երկուսով կազմի՛ր նախադասություն:

3.Հաղորդակցվի՛ր:

Կարդա՛ տեղեկությունը, ուսումնասիրի՛ր ներքոբերյալ աղյուսակը և զույգիդ հետ քննարկի՛ր տեքստում ընդգծված միտքը՝ ներկայացնելով քո կարծիքը:

Եվրոպացիները արաբական թվերի մասին իմացան X դարում: Հռոմի պապ Սիլվեստր II-ը առաջինն էր եվրոպացիներից, որ ծանոթացավ արաբական թվերին, հասկացավ և **գնահատեց դրանց հարմարավետությունը՝ հռոմեական թվերի հետ համեմատած**, և սկսեց ամեն կերպ ջատագովել դրանց ներդրումը եվրոպական գիտության մեջ:

Թիվը	Հռոմեական նշանակությունը
0	-
4	IV
8	VIII
9	IX
31	XXXI
46	XLVI
99	XCIX
583	DLXXXIII
888	DCCCLXXXVIII
1668	MDCLXVIII
1989	MCMLXXXIX
2009	MMIX
2010	MMX
2011	MMXI
3999	MMMCMXCIX

Դաս 6-7. Թվականի բուն և փոխանվանական կիրառությունները

1.Հաղորդակցվի՛ր:
Տետրումդ գրի՛ առ պատմական իրադարձությունների տարեթվեր (առնվազն տասը), որոնց ծանոթացել ես հայոց պատմության դասաժամին: Զույգիդ հետ համեմատի՛ր գրառած տարեթվերը՝ ստուգելով թվականների ուղղագրությունը, վերհիշի՛ր պատմական դեպքերի անցուդարձը:

2.Քննի՛ր:
ա.Կարդա՛ տեքստը և առանձնացրո՛ւ թվականները:
բ.Բացատրի՛ր, թե ինչպիսի տարբերություններ ես տեսնում թվականի կիրառության մեջ տրված տեքստում:

Երևանի Հանրապետության հրապարակում է գտնվում Հայաստանի ազգային պատկերասրահը: Այն հիմնադրվել է 1921թ-ին. թանգարանի տնօրեն է նշանակվել Մարտիրոս Սարյանը: Պատկերասրահի հիսունվեց ցուցասրահներում ներկայացված հավաքածուն ընդհանուր պատկերացում է տալիս ազգային կերպարվեստի պատմության մասին, ինչպես նաև ներկայացնում է արտասահմանյան երկրների արվեստը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Թանգարանային հավաքածուներից քառասուն հազարը ներառում է հայկական, ռուսական, եվրոպական արվեստի հրաշալի նմուշներ:

2021-ը նշանակալից տարի է թանգարանի համար. լրանում է ազգային պատկերասրահի 100 տարին:

Դաս 8. Թեմայի ամփոփում (ածական և թվական)

1.Ստուգի՛ր քեզ։
Լրացրո՛ւ տրված աղյուսակը, որը կօգնի քեզ ի մի բերելու «Ածական անուն» և «Թվական անուն» թեմաներից ձեռք բերած գիտելիքներդ։

Ածական անուն			
Ի՞նչ ես արդեն գիտեի մինչ թեման անցնելը	Ի՞նչ իմացա թեման ուսումնասիրելիս	Որտե՞ղ կկիրառեմ այս թեմայից ստացած գիտելիքները	Ի՞նչ դեռ չեմ հասկացել այս թեմայի շրջանակում
Թվական անուն			
Ի՞նչ ես արդեն գիտեի մինչ թեման անցնելը	Ի՞նչ իմացա թեման ուսումնասիրելիս	Որտե՞ղ կկիրառեմ այս թեմայից ստացած գիտելիքները	Ի՞նչ դեռ չեմ հասկացել այս թեմայի շրջանակում

2.Համեմատի՛ր, բացատրի՛ր։
Համեմատի՛ր երկու նախադասությունները և բացատրի՛ր, թե թվականի հետ գոյականը ինչու է գործածվել եզակի կամ հոգնակի թվով։

Միջոցառմանը երկու հարյուր երեխա մասնակցեց։ Մասնակից երկու հարյուր երեխաները նույն երգը երգեցին։

3.Նկարագրի՛ր։
Դու մասնակցում ես մի մրցույթի, որ կոչվում է «Ներկայացրո՛ւ ինքդ քեզ»։ Ունես 3 րոպե ժամանակ՝ քեզ՝ անծանոթ մարդկանց ներկայացնելու համար։ Մտածի՛ր, թե ինչպես կներկայացնես քո անձը. խոսքիդ մեջ կիրառի՛ր որակական ածականի համեմատության աստիճանները։

4.Քննի՛ր, համադրի՛ր։
Ի՞նչ տարբերություն և նմանություն ես տեսնում տրված շարքերի բառերում։
Երեք-երեսուն, եռյակ, եռօրյա, երիցս։
Տասը-տասներորդ, տասնամյակ, տասնամյա, տասնապատիկ։

5.Ստեղծի՛ր։
Ըստ տրված տեղեկույթի՝ փոքրիկ պատմություն հորինի՛ր, գործածի՛ր թվականներ(կարող ես փնտրել համացանցում), մանրամասն նկարագրի՛ր օվկիանոսը, նավաստիներին, նավապետին, թռչուններին՝ կիրառելով համապատասխան ածականներ։

Կոլումբոսը ե՞րբ և ինչպե՞ս է Ամերիկան հայտնագործել։
Պատմաբանները հետաքրքիր փաստ են հայտնաբերել՝ դրա հետ կապված։ Պարզվում է, որ երբ իսպանական նավերի տորմիղն անցնում էր օվկիանոսով, մայրամուտին դեպի հարավ-արևելք թռչող թութակների երամ է երևում։ Փորձված նավագնացը հասկանում է, որ թռչունները գիշերելու են գնում, ուրեմն ցամաքը մոտ է։ Նա փոխում է նավի ուղղությունը և հասնում Ամերիկա։